

ԼԵՃԱՍՏԱՆԻ ԵՎ ԱՐԵՎՄՏՅԱՆ ՈՒԿԱՐԱԽԱՅԻ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՈՒ ՄՇԱԿՈՒԹՅՈՒ
ՀԱՐՑՆԵՐԸ ՍԱԴՈՎ ԲԱՐՈՆՁԻ ԱՇԽԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ

ՌԱՅԻՎ ՀԱՐՑԱՐՁՈՒՄՅԱՆ

Հայազգի լեհ պատմաբան Սադոկ Բարոնը (1814—1892) պատմագիտությանն առավելապես հայտնի է իբրև լեհահայ գաղթավայրերի հետազոտող։ Բայց նա շոշափելի ավանդ ունի նաև լեհ-ուկրաինական պատմագիտության մեջ։ Նրա մոտ 45 տպագիր ու անտիպ աշխատությունները հիմնականում նրվիրված են հենց այդ խնդիրներին։ Հենվելով Ս. Բարոնի տպագիր աշխատությունների, ինչպես և նրա մասին եղած հոգվածների վրա, փորձենք ընդհանուր գծերով ներկայացնել լեհ-ուկրաինական պատմության և մշակույթի հարցերին նվիրված նրա գործերը։

Ս. Բարոնի աշխատությունների մի մասը ընդգրկում է Արևմտյան Ուկրաինայի քաղաքների ու բնակավայրերի պատմությունը¹։ Դրանցում կարևոր տեղեկություններ կան նաև քաղաքների պատմական հուշարձանների մասին։ Դիվանական փաստաթղթերի և այլ աղբյուրների նյութերով նա պարզել է բնակավայրերի և հուշարձանների հիմնարկության ժամանակը, հանգամանքները, հաճախ էլ հուշարձանների հիմնադիրների կամ մեկենասների, երբեմն նաև ճարտարագետների անունները և այլն։ «Բեռնարդինյան ուխտի հիշատակարանը»² գրքում առանձին տրված են Լեհաստանի, Լիտվայի և Ուկրաինայի մոտ 80 բնակավայրերի բեռնարդինյան վանքերի ցուցակը՝ պատմաաղբյուրագիտական հարուստ տվյալներով։ «Ակնարկ Լեհաստանում քարոզչական ուխտի պատմության» երկրորդ հատորի³ 7-րդ բաժինը հիմնականում նվիրված է Լեհաստանի, Ուկրաինայի և Լիտվայի 197 բնակավայրերում գոյություն ունեցած վանքերին, եկեղեցիներին ու մատուռներին։ Նա մանրամասն տեղեկություններ է բերում նաև քաղաքների պատմության առավել ուշ շրջանների վերաբերյալ։ «Ստանիսլավի հուշարձաններ» գրքում, օրինակ, նա հետևյալ կերպ է նկարագրում քաղաքը. «Ամբողջ քաղաքը արվարձաններով հանդերձ կլորի նման 5 մասի է բաժանված։ Քառանկյունի գլխավոր հրապարակից բացի, քաղաքն ունի ևս չորս հույակերտ հրապարակ, 24 փողոց և բավարար լուսավորվածություն ունեցող իջևանատներ։ Այսօրվա տվյալներով քաղաքը 765 տուն ունի, որից 327-ը փայտաշեն, մնացած 438-ը միահարկ, երկհարկ շենքեր են»⁴։ Քաղաքների մասին նրա աշխատություններում կան վիճակագրական եզակի տրվյալներ։ Օրինակ, «Առևտրական ազատ քաղաք Բրոդին» գրքի «Վիճակագրություն» բաժնում (այդպիսի բաժիններ կան քաղաքներին վերաբերող նրա գրքերի բոլոր աշխատություններում) նշելով, որ քաղաքը 1860-ական թվականներին ուներ 1561 տուն, 427 վաճառական և այլն, թվարկում է նաև քաղաքի սպասարկու ծառայությունները (փոստ, հեռագրատուն և այլն) և նշում, թե

¹ S. Baracz, Wolne miasta handlowe Brody, Lwów, 1865; *Եռլյնի*՝ Pamiętnik Buczackie, Lwów, 1882; *Եռլյնի*՝ Pamiętnik miasta stanisławowa, Lwów, 1858; *Եռլյնի*՝ Pamiętnik miasta żółkwi, Lwów, 1852; *Եռլյնի*՝ Pamiętki Jazłowieckie, Lwów, 1862; *Եռլյնի*՝ Wiadomość o Punikwicy małej, Poznań, 1886 և այլն։

² S. Baracz, Pamiętnik zakonu WW. oo. Bernardynów w Polsce, Lwów, 1874-

³ S. Baracz, Ryś dziejów zakonu kaznodziejskiego w Polsce, t. 2, Lwów, 1861, str. 290—516.

⁴ S. Baracz, Pamiętki miasta Stanisławowa, str. 187.

դրանցից յուրաքանչյուրում քանի մարդ է աշխատում⁵։ Իսկ «Բուլաշի հուշարձանները» գրքում նույնիսկ նշում է, թե քաղաքում քանի՞ աղզանուն կա, քանի՞ տան համար կա, քաղաքային ռադան քանի՞ հոգուց է բաղկացած՝ բերնլով ռադայի բոլոր 36 անդամների ազգանունները⁶։ Քաղաքների պատմությանը վերաբերող նմանատիպ տեղեկություններ կան նրա նաև «Զալոժցե», «Հին Բորկիի դոմինիկյան վանքը» և այլ աշխատություններում։

Ս. Բարոնշի ուսումնասիրությունների հիմնական արժեքը դրանց աղբյուրագիտական հիմքն է։ Բացառիկ արժեք ունեն Ս. Բարոնշի աշխատություններում քաղվածաբար կամ ամբողջովին բերված դիվանական հարյուրավոր փաստաթղթերը, արտոնագրերը, վճռագրերը, հրովարտականները, հիշատակաբանները, լեհական թագավորների ու լեհ-ուկրաինական մշակութային ու քաղաքական գործիչների նամակները և այլ վավերագրեր։ Ակ. Կրիպյակիչի տվյալներով Ս. Բարոնշն այդ փաստաթղթերից մոտ 100-ը առաջինն է շրջանառության մեջ դրել՝ «դրանք փրկելով վերահաս ոչնչացումից»⁷։ Այսպես՝ «Բեռնարդինյան ուխտի հիշատակարանը» գրքում զետեղված են բաղմամբիվ լատիներեն հրամանագրեր, արքունական հրովարտականներ, նամակներ և այլ փաստաթղթեր⁸։ «Պոդկոմենիայի դոմինիկյան վանքի պատմության» մեջ բերված են վանքի ներքին ինքնավարությանը և կրոնական կապերին վերաբերող 10 փաստաթուղթ⁹, իսկ Օլեսկ քաղաքի պատմությանն առնչվող 14 լատիներեն փաստաթուղթ է զետեղված «Կաթոլիկ եղբայրության բարեկամը» ժողովածուում¹⁰։

«Դոմինիկյան վանքը Հին Բորկիի մեջ» գրքի հավելվածում զետեղված է լեհական թագավոր Ստանիսլավ IV-ի ընդարձակ նամակ-հրովարտակր և էլի ուրիշ երեք լատիներեն վավերագրեր¹¹, որոնց իսկագրերը Ս. Բարոնշի ժամանակ գտնվելիս են եղել Հին Բորկիի դոմինիկյան վանքում։ «Յարոսլավի դոմինիկյան հայրերի դիվանը» գրքի նյութերը (մեծ մասամբ լատիներեն) վերաբերում են կվով, Փշեմիսլ, Սամբոժ, Սինյավ քաղաքների պատմությանն առնչվող նշանակալից դեպքերին։ Գրքում տրվում են նաև ժամանակագրություններ՝ ամեն քաղաքի համար առանձին-առանձին¹²։

Ուկրաինական ժողովրդի ազատագրական պատերազմին նախորդող ու հաջորդող շրջանների համար շահեկան են Բոգդան Խմելնիցկուն վերաբերող փաստաթղթերը՝ «Բեռնարդինյան ուխտի հիշատակարանը»¹³ և «Հիշատակարան լեհաստանի պատմության» գրքերում։ Վերջինում հրապարակված վավերագրեր, որը 1648 թ. փաստաթուղթ է, բացահայտում է ապստամբության որոշ մանրամասներ, ցույց տալիս, որ Բ. Խմելնիցկին թաթարների հետ պայմանագիր է կնքած եղել լեհաստանի դեմ խռովություն բարձրացնելու համար¹⁴։ Այդ շրջանին վերաբերող փաստաթղթերից հայ-ուկրաինական կապերի համար հետաքրքրական է այն փաստը, որ երբ Բ. Խմելնիցկին 1648 և 1655 թթ.

⁵ S. Barończ, Wolne miasto handlowy Brody, str. 157—162.

⁶ S. Barończ, Pamiętki Buczackie, str. 148—155.

⁷ И. П. Крипьякевич, Садок Баронч—историк армян бывшей Галиции («Исторические связи и дружба армянского и украинского народов», Ереван, 1961, с. 42).

⁸ S. Barończ, Pamiętnik zakonu Bernardynów., str. 169—193.

⁹ S. Barończ, Dzieje klasztoru dominikanów w Podkamentu. „Dodadek”, բաժինը.

¹⁰ S. Barończ, Towarzysz duchowieństwa katolickiego, Tarnopol, 1864, str. 485—504.

¹¹ S. Barończ, Klasztor dominikanów w starym Borku, Lwów, 1878, str. 68—113.

¹² S. Barończ, Archiwum WW. OO. Dominikanów w Jaros. Tawiu, Lwów, 1884, str. 3—71.

¹³ S. Barończ, Pamiętnik zakonu Bernardynów w Polsce, str. 169—190.

¹⁴ S. Barończ, Pamiętki dziejów Polski, Lwów, 1855, str. 111—112.

պաշարել էր Լվովը, նրա հետ բանակցելու գնացած Լվովի պատմիրականության կազմում էր նաև քաղաքի հայոց ավագների «երեսփոխաններից» Քրիստափոր Զախնովիչը¹⁵։ Ի դեպ, Ս. Բարոնչի այս տվյալը հաստատվում է Լվովի դատարանի XVII դ. դատական վճռագրերից մեկով¹⁶։

«Հիշատակարան Լեհաստանի պատմության» աշխատության մեջ փաստաթղթեր կան նաև Անդրուսովյան նշանավոր դաշնագրի, արևելյան երկրների հետ Լեհաստանի դիվանագիտական ու առևտրատնտեսական շփումների և բազմաթիվ այլ հարցերի մասին¹⁷։

«Իուլաչի հուշարձաններում» Ս. Բարոնչը բերում է XVII դ. 60-ական թվականներին այդ քաղաքում կազմակերպված տոնավաճառի ժամանակ վաճառված ապրանքների ոչ միայն քանակը (19), տեսակներն (մեղր, միս, գարեջուր, ջաքար և այլն) ու գները, այլև այս կամ այն ապրանքը ներմուծելու և վաճառելու համար սահմանված սակագները¹⁸։

Հանդիպում են նաև իրավական բնույթի վավերագրեր, որոնց մեծ մասը կրոնական ղանազան ուխտերի, եկեղեցիների, դրանց կից գործող եղբայրությունների իրավական դրուժյանը, պարտականություններին ու փոխհարաբերություններին է վերաբերում։ Դրանք լեհ-ուկրաինական իրավական մտքի պատմության այդ շրջանին վերաբերող կարևոր աղբյուրներ են։ Օրինակ, աշխարհիկ իրավունքի եզակի վավերագիր է 1383—1387 թթ. վերաբերող մի փաստաթուղթ, ուր խոսվում է Տոուն շինելու և հարսանիք ու այլ ուրախություններ անելու կարգի մասին¹⁹։

«Ակնարկ Լեհաստանի պատմության» գիրքը, լեհ դրամագետների կարծիքով, կարևոր է լեհ դրամագիտության պատմության համար, որովհետև գրքի 36, 39—40, 43—45 և 80-րդ էջերում Ս. Բարոնչը նկարագրում է Սիգիզմունդ III-ի և Յան III Սոբեսկու օրոք կտրված բազմաթիվ եզակի դրամներ ու մեդալներ, բերում դրանց վերաբերող խիստ արժեքավոր փաստաթղթերի ու արքունական հրահանգների պատճենները²⁰։ Ի դեպ, Ս. Ռիշարդը նշում է նաև, որ Ս. Բարոնչն ունեցել է 1207 միավորից բաղկացած դրամների ու մեդալների արժեքավոր հավաքածու²¹։

Ս. Բարոնչի հրատարակած փաստաթղթերի մի մասը ունի սկզբնաղբյուրների արժեք, որովհետև դրանց բնագրերը չկան։ Նրա աշխատությունների աղբյուրագիտական արժանիքներից են գրանցում հրապարակված տապանագրերի ու մահարձանների արձանագրությունները։ Այս տեսակետից առանձնապես հարուստ նյութեր են ամփոփված «Ակնարկներ Լեհաստանում քարոզչական ուխտի պատմության», «Ջալոժյե», «Կրակովի դոմինիկյան վանքն ու եկեղեցին», «Բուլաչի հուշարձանները», «Վինցենա Պլեբանկելի գոմինիկյանի վարդապետությունը» մենագրություններում։ «Բուլաչի հուշարձաններ» գրքում նշելով, որ քաղաքի եկեղեցիներում գտնվում են Պոտոցկիների տապանաքարերը, բերում է Բերնարդ, Յակոբ և Միխալ Պոտոցկիների երեք արձանագրությունները և այդ եկեղեցիներում գտնվող Պոտոցկիների տապանաքարերի վերժանությունը²²։ «Ակնարկներ Լեհաստանում քարոզչական ուխտի պատմության» մեջ զետեղված են բազմաթիվ վանքերի պատերին արված լատիներեն ու լեհերեն շինարարական և այլ բնույթի արձանագրություններ, այդ վանքերում թաղված

¹⁵ Նույն տեղում։

¹⁶ «Украино-армянские связи в 17-ом в.», Киев, 1969, с. 108—109.

¹⁷ Ս. Բարոնչի մեջբերած փաստաթղթերը հիմնականում բնագրի լեզվով են՝ լատիներեն, բայց պատմաբանը երբեմն դրանք ներկայացնում է նաև լեհերեն ղուգադիր թարգմանությամբ։

¹⁸ S. Barończ, Pamiętki Buczackie, str. 30—32.

¹⁹ S. Barończ, Pamiętnik dziejów Polski, str. 255—256.

²⁰ S. A. Ryszard, Zamalowany zb. acz nymyzmatów. „Wiadomości nymyzmatyczno-archeologiczne. № 1—2, Kraków, 1892, str. 315—316.

²¹ Նույն տեղում, էջ 315։

²² S. Barończ. Pamiętki Buczackie, str. 188.

նշանավոր մի քանի գործիչների շիրմաքարերի տապանազերերը: Հիշյալ արձանագրություններն առանձին հետաքրքրություն են ներկայացնում նաև վիմագրագիտական տեսակետից՝ վիմագրական տեքստերի համեմատական քննություններ, ինչպես նաև աղբյուրագիտական ճշգրտումներ կատարելու համար:

Լեհահայ պատմաբանի ուսումնասիրությունների մի մասն էլ նվիրված է Ռեչ Պոսպոլիտայի սահմաններում գործունեություն ծավալած այլազան կրոնական ուխտերի (Դոմինիկյաններ, Վասիլյաններ, Բերնարդինյաններ) պատմությանը: Դրանցում շոշափվում են նաև դավանաբանական հարցեր²³, Այդ աշխատություններում Ս. Բարոնը բազմաթիվ տպագիր ու անտիպ աղբյուրների, ինչպես նաև դիվանագիտական փաստաթղթերի ու վիմագիր արձանագրությունների բաղադրամասերով ճշտում է մի շարք կարևոր տվյալներ և իրադարձություններ՝ կապված կաթոլիկ քարոզիչների գործունեության հետ: Դոմինիկյանների մասին խոսելիս նա մեկիկ-մեկիկ նշում է աշխարհի այն երկրներն ու վայրերը, որտեղ նրանք գործունեություն են ծավալել: Պատմաբանը տալիս է քարոզիչների կենսագրությունները, տվյալ երկրում նրանց մուտք գործելու թվականը, տպագիր ու ձեռագիր աշխատությունների ցանկը և այլն: Ի դեպ, նրա հաշված 48 տեղանունների մեջ 34-րդը՝ Նախիջևանն է, որտեղ, ըստ Ս. Բարոնի, Դոմինիկյանները մուտք են գործել 1583 թ. և «մինչև 1720 թ. ունեցել են 10 վանք»²⁴, նույն գրքի 157—158 էջերում խոսում է նաև Հովհաննես Քոնեցու մասին (նրան կոչում է Յան Խերնացենսկի կամ Խեռնի), տեղեկություններ տալիս նրա քարոզչական եռանդուն գործունեության և Հռոմում ապրած շրջանի վերաբերյալ:

Հանրագիտական տեղեկություններ ու փաստեր են պարունակում նաև Ս. Բարոնի՝ կաթոլիկ կրոնական ուխտերի պատմությանը վերաբերող մյուս գործերը, որոնցում մանրամասն ուսումնասիրված է այդ միաբանությունների սկզբնավորման ու տարածման պատմությունը, գործունեության շառավիղները՝ Լեհահայ և ուկրաինական եկեղեցիների հետ դրանց կապերի բացահայտմամբ: Այդ խմբի աշխատություններում առկա են լեհ-ուկրաինական մրջակույթի, պատմության, ռազմաքաղաքական բազմաթիվ գործիչների, գրողների ու մտավորականների մասին կենսագրական տեղեկություններ: Այսպես՝ միայն «Ակնարկներ Լեհաստանում քարոզչական ուխտի պատմության» և «Բուլաշի հուշարձաններ» մենագրություններում լեհ և ուկրաինացի 400 մշակութային, քաղաքական գործիչների, գրողների ու գիտնականների կենսագրություններ կան: Առաջին մենագրության 6-րդ բաժինը («Քարոզչական ուխտի սրբերը, գիտնականները և գրողները») 250 գործիչ մասին կենսագրական մանրամասն տեղեկություններ պարունակող բառարան է, որտեղ տրվում է նաև այլ գործիչների տպագիր ու ձեռագիր աշխատությունների մատենացանկը և այլ տեղեկություններ²⁵, «Զալոժցե» աշխատության մեջ Ս. Բարոնը բերում է այդ քաղաքում ապրած 16 եկեղեցական-մշակութային խոշոր գործիչների կենսագրությունները՝ նույն սկզբունքով:

²³ S. Barończ, Nauki religijne wincentego plebankiewicza dominikana, Lwów, 1881, 1884; *Խոսքի* Objaśnienie wznania wiary rzymsko-katolickiego, Poznań, 1854; *Խոսքի* Dzieje klasztoru dominikanów w Podkameniu, Tarnopol, 1870; *Խոսքի* Wiadomości o klasztorze oo. Dominikanów w Podkameniu, Lwów, 1858; *Խոսքի* Rys dziejów zakonu kaznodziejskiego w Polsce, Lwów, 1860—1861; *Խոսքի* Klasztor i kościół oo. Dominikanów w Krakowie, Poznań, 1888 և այլն.

²⁴ S. Barończ, Rys dziejów zakonu kaznodziejskiego w Polsce, t. 1, str. 44.

²⁵ S. Barończ, Rys dziejów zakonu kaznodziejskiego w Polsce, t. 1, str. 75—289.

Լեհահայ պատմաբանը նշանավոր գործիչների մասին ունի նաև մի քանի փոքրիկ ուսումնասիրություններ²⁶, որոնցում կան նախկինում շրջանառության մեջ չգրված հետաքրքիր փաստերու ճշին սլավոններենի քերականության հեղինակ Մեյել Սմոտրիցկին (մտվ. 1587—1633) ուկրաինական նշանավոր գիտնական, որոշ ու քերական էր, եկեղեցական բարձրաստիճան գործիչ։ Ս. Բարոնչի տվյալներով նա ծնվել է Պոդոլիայի Սմոտրիչ քաղաքում։ Հոր անունը Գերասիմ կամ Հարասիմ էր, որից և նրա մյուս ազգանունը՝ Հարասիմովիչը։ Ուկրաինական թատրոնի վերածնության նշանավոր գործիչներից մեկի՝ Գավթովիչի մասին իր 36 էջանոց փոքրիկ աշխատության մեջ Բարոնչը բերում է նրա 7 երկերի մատենացանկը, որոնցից մեկը, ըստ Ս. Բարոնչի, թարգմանություն է լատիներենից²⁷, XVII դ. ուկրաինական մշակույթի մյուս ակա-նավոր գործիչը, որին Ս. Բարոնչն առանձին աշխատություն է նվիրել, Կասիան Սակովիչն է։ Աշխատության վերջում բերված Կասիան Սակովիչի 7 երկերի մատենացանկը ընթերցողին պատկերացում է տալիս ուկրաինացի գիտնականի մտահորիզոնի լայնության և հետաքրքրությունների շրջանակների մասին։ Յան Տարնովսկուն (1488—1561) նվիրած Ս. Բարոնչի կենսագրական ակնարկը միջնադարյան Լեհաստանի ռազմագիտության խոշորագույն գործիչներից ու տեսաբաններից մեկի մինչ այդ հրատարակված ամենաընդարձակ ու փաստառատ կենսագրություններից է։

Ս. Բարոնչի աշխատությունները նաև լեհ-ուկրաինական մշակույթի ու զերպարվեստի պատմության կարևոր աղբյուր են։ Այս առումով բացառիկ կարևորություն են ստանում նրա աշխատություններում գրված բազմաթիվ տեղեկություններն այս կամ այն վանքում գտնվող սրբապատկերների ու այլ ներկարների մասին։ Առանձնապես հարուստ տվյալներ կան Վրբագույն Մարիամի հրաշագործ պատկերները Լեհաստանում՝ աշխատության մեջ²⁸։ Այս մե-նագրությունը պարունակում է 463 սրբապատկերների մանրակրկիտ նկարագրությունը՝ նկարիչների անուններով (եթե գիտի), նկարի ստեղծման վայրի նշումով, պատկերի մի վայրից մյուսը տեղափոխելու հանգամանքների բացատրություններով և այլ տեղեկություններով։ Ս. Բարոնչը բերում է նաև սրբապատկերների վրա առկա բոլոր մակագրությունները։ Ազգագրական-բանահյուսական և լեհ-ուկրաինական ժողովուրդների հոգևոր երգերի պատմության ուսումնասիրության առումով աղբյուրագիտական կարևոր նշանակություն ունեն որոշ սրբապատկերների մասին եղած ժողովրդական ավանդույթների, հրաշքների ու դրանց նվիրված հոգևոր ու ժողովրդական երգերի մեջբերումները։

Լեհ տոհմագիտության, մասնավորապես զինանշանների պատմության ուսումնասիրության համար եզակի աղբյուր է Ս. Բարոնչի «Լեհաստանի նշանավոր հայոց վարքը» աշխատությունը, ուր տրված են լեհահայ տասնյակ տոհմերի պատմությունը և նրանց զինանշաններից 23-ի նկարագրությունը²⁹։ Այդ մասին Լ. Թեոդորովիչը գրում է. «Լեհական զինանշանագիտությունը մեծ հետաքրքրություն է հանդես բերում Ս. Բարոնչի այս աշխատության հանդեպ, որովհետև այնտեղ գտել է շատ նոր զինանշաններ, որոնք գիտությունը մինչ այդ դեռևս չէր նկարագրել»³⁰։

²⁶ S. Barócz, Melecz Smotrycki, Gologory, Poznan, 1890; Zalożce, Gawat Iakób, Poznan, 1889; Կասյ Կասյ Կասյ Kasian Sakowicz, Poznan, 1890; Կասյ Կասյ Jan Tarnowski, szkic biograficzny, Poznan, 1890.

²⁷ S. Barócz, Zalożce, Gawat Jakób, str. 5—6.

²⁸ S. Barócz, Cudowne obrazy matki najświeższej w Polsce. Lwów, 1892.

²⁹ S. Barócz, Żywoty sławnych Ormian w Polsce, Lwów, 1856 str. 1—5, 29—33, 87—88, 142, 173—177, 281, 395 և այլն։

³⁰ L. Theodorowicz, Nieco o heraldyce i rodach Ormian Polskich, Lwów, 1925, str. 7.

Մոտավորապես անցյալ դարի 40-ական թվականներից, պատմագիտական աշխատությունների համար նյութեր հայթայթելուն զուգընթաց, Ս. Բարոնշը ժողովում էր նաև բանահյուսական նյութեր, որոնք 1850-ական թվականներից պարբերաբար տպագրում էր թե՛ իր աշխատություններում և թե՛ Լվովի մամուլում։ Մամուլում տպագրված իր առաջին բանահյուսական նյութերից մեկի առնչությամբ («Խեղճ Իվաս») Ս. Բարոնշն այն ուշագրավ միտքն է հայտնի, թե լեհ-ուկրաինական ավանդություններում ու հեքիաթներում արևելյան ժողովուրդների բանահյուսության տարրեր կան³¹։ Նրա խոսքերը, անտարակույս, վերաբերում են նաև հայերին, եվ թ. Մանկության, Վլ. Լոդինսկու, Մ. Զուկ-ժեկա-Դուբասովայի և այլոց այն տեսակետները, թե հայկական ու արևելյան մշակույթի ու կենցաղի բազմաթիվ տարրեր լեհահայերի միջոցով թափանցել են լեհական մշակույթի ու կենցաղի մեջ³², անուղղակիորեն լրացնում են Ս. Բարոնշի միտքը։ Արևելյան սլավոնների մշակույթում հայկական տարրերի գոյությունը, որ բազմիցս փաստվել է ճարտարապետության, արհեստների, նկարչության ու քանդակագործության և էլի մի քանի այլ ասպարեզներում, կասկած չի հարուցում։

Ս. Բարոնշը, ինչպես ասվեց, զանազան աղբյուրով հավաքել և իր աշխատությունների մեջ զետեղել է լեհ-ուկրաինական բանահյուսության նյութեր։ «Պողովմենիայի դոմինիկյան վանքի պատմությունը» գրքում, այդ վանքի պատմությունը շարադրելիս, նա բերում է քաղաքի մասին հյուսված մի րնդաբձակ ժողովրդական ավանդություն³³։ Խոսելով Ստանիսլավի շրջակայքում աճող լիպա (լորենի) ծառի մասին՝ այդ քաղաքին վերաբերող մենագրության մեջ նա նշում է, թե լորենին հեթանոս սլավոնների մեջ սուրբ ծառ էր հռչակվել։ Ի հավաստումն այդ տեղեկության, Ս. Բարոնշը բերում է մեկական լեհական և ուկրաինական ժողովրդական երգ, որոնց մեջ երևում են լորենու պաշտամունքի հետքեր³⁴։ Բնակավայրերի մասին խոսելիս, պատմաբանը հաճախ նշում է նաև քաղաքի անվան ծագումը, բերում ժողովրդական ստուգաբանությունը։ Օրինակ «Բուչաչի հուշարձանները» մենագրության մեջ նշում է, թե ժողովուրդը Բուչաչի ծագումը բխեցնում է բուլընա (կաղնու մի տեսակ) բառից³⁵։ Ս. Բարոնշը ոչ միայն հավաքել է ժողովրդական ավանդություններ ու հեքիաթներ, այլև փորձել դրանք պարզեցնել լեզվով ներկայացնել մանուկ ընթերցողին։ Մանկավարժական-դաստիարակչական այսպիսի մի բովանդակին հաջողված ու երեխաներին հասկանալի գիրք է «Հետազոտող-բարոյագիտության վարդապետարան» (կամ՝ դասընթաց) 231 էջանոց ժողովածուն³⁶։ Գրքում զետեղված 12 ժողովրդական ասացվածքները դարձել են նրա գրական մշակումները հանդիսացող՝ գրքի 12 ժողովրդական ավանդությունների բնաբանները։ Ամեն մի ավանդություն վերջանում է բնաբան-ասացվածքի գաղափարական բովանդակությունը բացատրող դատողություններով։

Բանահյուսական և ազգագրական տվյալներ կան նաև «Ժուլկվայի հուշարձանները», «Առևտրական ազատ քաղաք Բրոդին», «Յագլովնցի հուշարձան-

³¹ „Dziennik Literacki“, Lwów, 1854, str. 52—56.

³² T. Mańkowski, Orient w Polskiej kulturze artystycznej, Wrocław-Kraków 1959, str. 34, 56, 78—79, 215 և այլն; Br. Zakrzewska-Dubasowa, Ormianie w dawnej Polsce, Lublin, 1932, str. 174—185; Wł. Łozinski. Złotnictwo Lwowskie w dawnych wiekach (1384—1640), Lwów, 1889.

³³ S. Barócz, Dzieje klasztoru dominikanów w Podkameniu, str. 1—7.

³⁴ S. Barócz, Pamiątki Stanisławowa, Lwów, 1858, str. 9—10.

³⁵ S. Barócz, Pamiątki Buczackie, str. 3.

³⁶ S. Barócz, Badacz-studium obyczajowe, Brody, 1875. Սա Բարոնշի մեկ տպագիր գրական ժողովածուն է։ Ի դեպ, Ս. Բարոնշի կենսագրիչների ուշադրությունից վրիպել է այն հանգամանքը, որ նա նաև ոտանավորների և գրական այլ ստեղծագործությունների հեղինակ է (այս մասին տե՛ս Ռ. Համբարձումյան, Հայագիր լեհական պատմաբան Ս. Բարոնշ, «Բանբեր Երևանի համալսարանի», 1979, № 3, էջ 164)։

ները», «Տեղեկություններ փոքր Պոնիկվիցի մասին», «Ակնարկներ հայոց պատմության» և այլ աշխատություններում: Սակայն Ս. Բարոնչի բանահավաքության կարևորագույն արդյունքը «Հեքիաթներ, զավեշտաբանություններ, զրույցներ, առակներ և երգեր ի Ռուսիա»³⁷ 271 էջանոց ժողովածուն է, որն ուկրաինացի գիտնականների կարծիքով ուկրաինական բանահայտության պատմության մնայուն էջերից մեկն է: Թեև Ս. Բարոնչի ժողովածուն լույս տեսնելուց առաջ լեհ բանասեր-պատմաբաններ Ժ. Պաուլը, Լ. Սեմենսկին, Կ. Վույցիցկին, Ս. Պետրուշիևիչը, Պ. Ժեգոտան և մյուսները տարբեր ժամանակներում (1830—1850-ական թվականներ) լեհերենով հրատարակել էին լեհ-ուկրաինական բանահայտության նմուշներ, բայց XIX դ. ուկրաինացի մտավորականներին ու հասարակական գործիչներին (Մ. Դրազոմանով, Իվ. Ֆրանկո և ուրիշներ) դա չի խանգարել շատ բարձր գնահատելու Ս. Բարոնչի ժողովածուն: Այս գրքին առանձնակի կարևորություն է հաղորդում այն հանգամանքը, որ այնտեղ գետնից չեն հանդիպում ոչ միայն մինչև այդ հրատարակված չէին, այլև հեղինակը մտածված կերպով ժողովածուի մեջ հնարավորին չափ խուսափել է գետնից նույնիսկ այն նյութերը, որոնք բովանդակային աղբյուրներ ունեն արդեն հրատարակված ժողովածուների համապատասխան նյութերի հետ³⁸:

Այսպիսով, հայագրի լեհ պատմաբան Սադոկ Բարոնչի աշխատությունները կարևոր են ոչ միայն Լեհաստանի և Արևմտյան Ուկրաինայի հայկական գաղթավայրերի պատմության համար, այլև՝ լեհ-ուկրաինական քաղաքների ու բնակավայրերի, գավառագիտության, պաշտամունքային ու քաղաքացիական ճարտարապետության, այդ ժողովուրդների ազգային-ազատագրական պատերազմների ու առևտրատնտեսական հարաբերությունների պատմության ուսումնասիրության համար: Ս. Բարոնչը լուրջ ներդրում ունի երկու ժողովուրդների պետական, հասարակական, գիտական ու մշակութային գործիչների վարքագրության, այդ երկրներում քարոզչական ուխտերի գործունեության և այլ բնագավառների պատմության ուսումնասիրության բնագավառում: Եվ վերջապես, Ս. Բարոնչը իր հավաքած և հրատարակած բազմաթիվ ու բազմապիսի բանահյուսական նյութերով և արձանագրություններով դառնում է լեհ-ուկրաինական բանասիրության ու վիճաբանության երախտավորներից մեկը:

ВОПРОСЫ ИСТОРИИ И КУЛЬТУРЫ ПОЛЬШИ И ЗАПАДНОЙ УКРАИНЫ В ТРУДАХ САДОКА БАРОНЧА

РАФИК АМБАРЦУМЯН

Резюме

Польский историк армянского происхождения Садок Баронч (1814—1892) известен в основном своими работами по истории армянских колоний Польши и Западной Украины. Между тем научное наследие Баронча охватывает в основном краеведение, этнографию и архитектуру Польши и Западной Украины, историю культуры и различных религиозных орденов, жизнеописание деятелей культуры этих народов и многие другие вопросы. Труды историка особенно ценны с точки зрения источниковедения, ибо многое из приведенных им архивных материалов, а также описанных им настенных и иных надписей уничтожено, и труды его, в силу этих обстоятельств, приобретают ценность первоисточника.

³⁷ S. Barończ, Bajki, Podanie, przysłówie i pieśni na Rusi, Tarnopol. 1866, Բրախ. Lwów, 1886.

³⁸ Նույն տեղում, էջ 271, ծան. № 1: